


ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏՐԱԿԱՆ  
ՊԼԵՆՈՒՄԻ  
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

ՀԱՅԿՈՒՍՏՐԱՏ — ՅԵՐԵՎԱՆ — 1937.



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՑ



3K01-13

# ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1937 թ.)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

844 2002



ՀԱՅԿՈՒՍԷՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1937

А  $\frac{11}{1950}$

**О решениях пленума ЦК ВКП (б)  
(1937 г.)**

Армпартиздат, Ереван. 1937.

# ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒ- ԹՅՈՒՆ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՍԻ ՇԵՐՔԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Որերս վերջացավ Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումը: Պլենումը ֆենարկեց այն հարցը, թե ինչ խնդիրներ են դրված կուսակցական կազմակերպությունների առջեվ՝ նոր Սահմանադրության հիման վրա կատարվելիք՝ ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի առաջիկա ընտրությունների կապակցությամբ: Պլենումն ընդունեց համապատասխան բանաձևով, վորը հրապարակվում է ստորեվ:

Այնուհետև պլենումը ֆենարկեց տնտեսական ու կուսակցական շինարարության հարցեր և ընդունեց համապատասխան գործնական վորոշումներ: Պլենումը ֆենարկեց նաև Բուխարինի ու Ռիկովի հակակուսակցական գործունեության հարցը և վորոշեց վտարել նրանց Համ Կ(բ)Կ շարքերից:


THE UNIVERSITY OF CHICAGO  
1951

The following is a list of the  
members of the committee  
appointed to investigate the  
charges against the  
Faculty of the University of  
Chicago in the year 1951.



**ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՍՀՄ-Ի ԳԵ-  
ՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՍԻՍՏԵՄՈՎ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱ-  
ԿԱՆ ԱԶԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵ-  
ՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ**

**Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի բանաձեզն ընկեր  
ժ.Գ.Մ.ՆՈՎԻ զեկուցման առթիվ՝ ընդունված 1937 թ.  
փետրվարի 27-ին**



ԽՍՀ Միութեան նոր Սահմանադրութիւնը մտցնելը շրջադարձ է նշանակում յերկրի քաղաքական կյանքում: Այդ շրջադարձի ելութիւնն է ընտրական սխտեմի հետագա դեմոկրատացումը՝ խորհուրդների վոչ լիովին հավասար ընտրութիւնները հավասարով, բազմաստիճանը՝ ուղղակիով, բացը՝ փակով փոխարինելու իմաստով:

Յեթե նոր Սահմանադրութիւնը մտցնելուց առաջ գոյութիւն ունեյին ընտրական իրավունքի սահմանափակումներ պաշտամունքի սպառաւորների, նախկին սպիտակ-գլարդիականների, նախկին մարդկանց և հանրագուտ աշխատանքով չզբաղվող անձերի համար, ապա նոր Սահմանադրութիւնը դեն է նետում ընտրական իրավունքի ամեն մի սահմանափակում քաղաքացիների այդ կատեգորիաների համար, ընդհանուր դարձնելով պատգամավորների ընտրութիւնները:

Յեթե առաջ պատգամավորների ընտրութիւնները հավասար չեյին, քանի վոր գոյութիւն ունեյին ընտրութիւնների տարբեր նորմաներ քաղաքային և գյուղական բնակչութեան համար, ապա այժմ ընտրութիւնների հավասարութիւնը սահմանափակելու անհրաժեշտութիւնը վերացված է, և բոլոր քա-

զաքացիներն իրավունք ունեն հավասար հիմունքներով մասնակցելու ընտրություններին:

Յեթե առաջ Խորհրդային իշխանության միջին ու բարձր որդանների ընտրությունները բազմաստիճան էյին, ապա այժմ, ըստ նոր Սահմանադրության, բոլոր խորհուրդների ընտրությունները՝ սկսած գյուղականներից ու քաղաքայիններից մինչև Գերագույն Խորհուրդը, կատարելու յեն քաղաքացիներն անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

Յեթե առաջ խորհուրդների համար պատգամավորների ընտրությունները կատարվում էյին բաց քվեարկությամբ և ցուցակներով, ապա այժմ, պատգամավորների ընտրությունների ժամանակ, քվեարկությունը լինելու յե գաղտնի և վոչ թե ցուցակներով, այլ ըստ ընտրական շրջանների առաջադրվող առանձին թեկնածությունների:

Վերջապես, Սահմանադրությունը մըտցնում է համաժողովրդական հարցում (ռեֆերենդում):

Ընտրական սխտեմի այդ փոփոխությունները նշանակում են խորհրդային որդանների նկատմամբ մասսաների ունեցած վերահսկողության ուժեղացումը և մասսաների առաջ խորհրդային որդանների ունեցած պատասխանատվության ուժեղացումը:

Գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք

մտցնելու հետեանքը կլինի մասսաների քաղաքական ակտիվության հետագա ուժեղացումը, աշխատավորների նոր խավերի ներգրավումը պետութայն կառավարմանը: Դրանով իսկ պրոլետարիատի դիկտատուրան դառնում է բանվոր դասակարգի կողմից հասարակութայն պետական ղեկավարման ավելի ճկուն, և հետևաբար ավելի հզոր սխտեմ, բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան ընդարձակվում է, նրա հիմքն ավելի հաստատուն է դառնում:

Այդ շրջադարձը կատարելապես զինված դիմավորելու համար՝ կուսակցությունն այդ շրջադարձի գլուխ պետք է կանգնի և լիակատար չափով ապահովի իր ղեկավար դերը յերկրի գերագույն որգանների առաջիկա ընտրությունների ժամանակ:

Պատրաստ են արդյոք կուսակցական կազմակերպություններն այդ տեսակ ղեկավարման համար:

Ի՞նչ է պահանջվում կուսակցությունից, վորպեսզի նա կարողանա կանգնել այդ շրջադարձի գլուխ, նոր, մինչև վերջը դեմոկրատական ընտրությունների գլուխ:

Դրա համար պահանջվում է, վոր կուսակցությունն ինքն անցկացնի հետևողական դեմոկրատական պրակտիկա, վոր նա ներկուսակցական կյանքում մինչև վերջն անցկացնի դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները, ինչպես այդ պահանջում է կուսակցութայն կանոնադրությունը, վոր նա ինքն ունենա այն անհրաժեշտ պայմանները, վորոնց շնոր-

հիվ կուսակցութեան բոլոր որդաններն ընտրովի լինեն, վոր քննադատութիւնը և ինքնաքննադատութիւնը զարգանան լիակատար չափով, վոր կուսակցական մասսայի առջև կուսակցական որդանների պատասխանատւութիւնը լիակատար լինի և վոր ինքը՝ կուսակցական մասսան լիովին ակտիվացվի:

Կարելի՞ յէ արդյոք ասել, թե կուսակցական բոլոր կազմակերպութիւններն արդեն պատրաստ են կատարելու այդ պայմանները, թե նրանք արդեն լիովին վերակառուցվել են դեմոկրատական ձևով:

Դժբախտաբար, լիակատար վստահութեամբ չի կարելի ասել այդ:

Այդ մասին ե ասում կուսակցութեան կանոնադրութեան և ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների խախտման պրակտիկան, վոր գոյութիւն ունի մի քանի կազմակերպութիւններում:

Վորո՞նք են այդ խախտումները:

Կուսակցական որդանների ընտրականութիւնը, վորը սահմանված ե կուսակցութեան կանոնադրութեամբ, մի շարք կազմակերպութիւններում խախտվել ե: Կուսակազմակերպութիւնները չեն պահպանում կուսակցական որդանների ընտրութիւնների այն ժամկետները, վորոնք սահմանված են կուսակցութեան կանոնադրութեամբ: Լայն չափով տարածվել ե զանազան դեկավար աշխատողներին վորպես շրջկոմների, քաղկոմների, յերկրկոմների, մարդկոմների, ազգային կոմկուսների կենտկոմների պլենումների անդամներ կոռուպ-

տացիայի յենթարկելու վոչնչով չարդարաց-  
վող պրակտիկան:

Վերադաս կուսակցական որդանների կող-  
մից կուսակցական կոմիտեների քարտուղար-  
ներին հաստատելու այն կարգը, վորը սահ-  
մանված է կուսակցության կանոնադրու-  
թյամբ, մի շարք կուսկազմակերպություննե-  
րում փաստորեն վերածված է նշանակման  
սխտեմի: Կուսկոմների քարտուղարների  
հաստատումը հաճախ տեղի յե ունենում նախ-  
քան նրանց ընտրվելը տեղական կուսկազմա-  
կերպություններում, իսկ գործնականում դրա  
հետևանքն է լինում այն, վոր տեղական  
կուսկազմակերպությունները հնարավորու-  
թյուն չեն ունենում քննարկելու հանձնարար-  
վող աշխատողի թեկնածությունը:

Ընտրական պաշտոններում հաստատելը  
և աշխատանքից հեռացնելը հաճախ տեղի յե  
ունենում կուսորդանների հարցման կարգով  
ընդունված վորոշումների միջոցով և առանց  
կուսակցական կոմիտեյի պլենումին հանձնա-  
րարելու նոր աշխատողների թեկնածություն-  
ները, ինչպես և առանց այս կամ այն կու-  
սակցական ղեկավարի հեռացման դրդապատ-  
ճառները կուսկազմակերպություններին բա-  
ցատրելու:

Ինչ վերաբերում է կուսորդանների ընտ-  
րություններին, ապա մինչև այժմ ել գո-  
յություն ունի մի պրակտիկա, վորի համաձայն  
թեկնածուների ցուցակների քննարկումը տեղի  
յե ունենում միմիայն նախնական խորհրդակ-  
ցություններում, ավագների խորհուրդներում,

պատգամավորությունները ժողովներում, ըստ վորում, վորսէս կանոն, թեկնածությունների շուրջը հենց պլենումներում ու կոնֆերենցիաներում վիճարանություններ չեն բացվում, քվեարկությունը կատարվում է ցուցակով և վոչ անձնապես, ու այդպիսով ընտրական պրոցեսուրան հասարակ ձևակա- նության է վերածվում:

Դեմոկրատական ցենտրալիզմի հիմունք- ների խախտման այս բոլոր փաստերը վնաս են հասցնում կուսակցությանը, վորովհետև դը- րանք արգելակում են կուսակցության ան- դամների ակտիվության աճումը, մեր կու- սակցության կյանքում քաղաքական հատուկ նշանակություն ունեցող ակտիվին զրկում են ղեկավար աշխատանքին մասնակցելու հնարա- վորությունից, կուսակցության անդամներին զրկում են կուսորդանների գործունեյությա- նը վերահսկելու իրենց որինական իրավունք- ներից և դրանով իսկ խախտում են ղեկավար- ների ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբերությունները:

Այդպիսի պրակտիկայի ցայտուն որինակ- ներ են հանդիսանում վերջին ժամանակներս ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հայտնաբերված այն փաստերը, վորոնք ցույց են տալիս կուսակ- ցական-քաղաքական աշխատանքի աղաղակող կերպով անուշադրության մատնված լինելը Ա- զով-Սևծովյան յերկրկումում, Կիևի մարզկո- մում և Ուկրաինայի Կ(բ)Կ Կենտկոմում և այլ կուսակազմակերպություններում, վորոնք ար- տահայտվում են կուսակցության կանոնադրու-



Թյան ու դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների կոպիտ խախտումներով՝ կուսորգանների ընտրականությունից հեռանալու և կոոսյուտացիայի անհանդուրժելի պրակտիկան մտցնելու իմաստով:

Համ Կ(բ) Կ Կենտկոմի պլենումն ընդգծում է, վոր Կիեվի մարզկոմում ու Ազով-Սևծովյան յերկրամասում հայտնաբերված սխալ ղեկավարման որինակները յեզակի չեն, այլ այս կամ այն չափով հատուկ են բոլոր յերկրային ու մարզային կուսկազմակերպություններին:

Համ Կ(բ) Կ Կենտկոմի պլենումը գտնում է, վոր այդ և դրանց նման թերությունների վերացումն այն անհրաժեշտ պայմանն է, առանց վորի չեն կարող իրագործվել կուսակցության այն նոր խնդիրները, վորոնք առաջ են յեկել յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած շրջադարձի փաստի կապակցությամբ, նոր Սահմանադրության ընդունման ու գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա յերկրի գերազույն որգանների առաջիկա ընտրությունների կապակցությամբ:

Այդ պատճառով անհրաժեշտ է վերակառուցել կուսակցական աշխատանքը, հիմք ունենալով կուսակցության կանոնադրության պահանջած ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների անպայման ու լիակատար կենսագործումը:

Համ Կ(բ) Կ Կենտկոմի պլենումն անհրա-

Ժեշտ ե համարում իրականացնել և պարտա-  
վորեցնում ե բոլոր կուսկազմակերպություն-  
ներին՝ կենսագործել հետևյալ միջոցառում-  
ները.

1. Վերացնել կուսկոմիտեներում վորպես  
անդամներ կոոպտացիայի յենթարկելու  
պրակտիկան և վերականգնել կուսկազմակեր-  
պությունների ղեկավար որդանների ընտրա-  
կանությունը՝ կուսակցության կանոնադրու-  
թյան համապատասխան:

2. Արգելել կուսորդանների ընտրու-  
թյունների ժամանակ ցուցակներով քվեարկե-  
լը: Գվեարկումը կատարել ըստ առանձին  
թեկնածությունների, ընդամին պահպա-  
նելով կուսակցության բոլոր անդամների հա-  
մար թեկնածուներին մերժելու և նրանց քըն-  
նադատելու անսահմանափակ իրավունք:

3. Կուսորդանների ընտրությունների հա-  
մար սահմանել թեկնածուների փակ (զաղտ-  
նի) քվեարկություն:

4. Բոլոր կուսկազմակերպություններում  
անցկացնել կուսորդանների ընտրություններ,  
սկսած սկզբնական կուսկազմակերպություն-  
ների կուսկոմիտեներից և վերջացրած յերկ-  
րային, մարզային կոմիտեներով ու ազգային  
կոմիտեների Կենտկոմներով, ավարտելով ըն-  
տրությունները վոչ ուչ մայիսի 20-ից:

5. Պարտավորեցնել բոլոր կուսկազմա-  
կերպություններին՝ կուսակցության կանոնա-  
դրության համապատասխան խստիվ պահպա-  
նել կուսորդանների ընտրությունների ժամ-  
կետները. սկզբնական կուսկազմակերպու-  
թյուններում — տարին մեկ անգամ, չըջանա-

յին ու քաղաքային կազմակերպություններում — տարին մեկ անգամ, մարզային, յերկրային ու հանրապետական կազմակերպություններում — մեկ և կես տարին մեկ անգամ :

6. Սկզբնական կուսկազմակերպություններում ապահովել համադրածարանային ժողովներում կուսկոմներ ընտրելու կարգի խիստ պահպանումը, թույլ չտալով ժողովների փոխարինումը կոնֆերենցիաներով :

7. Լիկվիդացիայի յենթարկել ընդհանուր ժողովները փաստորեն վերացնելու և ընդհանուր ժողովները ցեխային ժողովներով ու կոնֆերենցիաներով փոխարինելու այն պրակտիկան, վոր գոյություն ունի մի շարք սկզբնական կազմակերպություններում :


7062 H8  
A 1950





**ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՍՍՆ-  
ՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼԻՆԵՒՈՒ ՆՂԱՆՆ-  
ԲԱՆՈՎ**

**1937 թ. մարտի 6-ի  
„Правда“ № 64 (7030)**



Համ Կ(բ)Կ Կենտրոնի որերզ վերջացած պլենումը մեր կուսակցութեան պատմութեան մեջ կմտնի վորպէս նրա կարեւորագույն եջերից մեկը: Պլենումի նըշանակութիւնը հսկայական է մի շարք պատճառներով, և առաջին հերթին այն պատճառով, վոր նա գումարվեց Ստալինյան Սահմանադրութիւնը մտցըվելուց անմիջապէս հետո, մի Սահմանադրութիւն, վոր չըջադարձ է հանդիսանում յերկրի քաղաքական կյանքում:

Պլենումն իր առջև խնդիր դրեց՝ ստուգել, թե ի՞նչ չափով պատրաստ են կուսակցութեան բոլոր ողակները՝ այդ չըջադարձն ամբողջապէս զինված գիտավորելու համար: Պլենումի հսկայական նշանակութիւնը նրա ընդունած վորոշումներն են, վորոնք բոլշևիկներին հատուկ ամբողջ օրութեամբ ու ինքնաքննադատութեամբ յերևան բերին կուսակցական կազմակերպութիւնների աշխատանքի խոշորագույն թերութիւններն ու սխալները և նշեցին այդ հիվանդագին յերևույթներն ու դրանց հետեանքները վերացնելու ներդրծոն ուղիները:

Ստալինյան Սահմանադրութիւնն արձանագրեց բանլօրների ու գյուղացիների սոցիալիստական պետութեան մեծ նվաճումները: Կուսակցութեան գործի, կոմունիզմի գործի հաջողութիւններն իրոք շատ մեծ են: Դրանց դրական նշանակութիւնը հսկայական է:

Բայց հաջողութիւններն ունեն նաև իրենց ստվերա-  
կողմերը: Վոչ բավականաչափ փորձված, վոչ բա-  
վականաչափ հմուտ մարդկանց մոտ հաջողութիւն-  
ները, ինչպես բաղձիցս մատնանչել և ընկեր Ստալի-  
նը, առաջ են բերում պարծենկոտութիւն, մեծա-  
մտութիւն, բերանբացութիւն, ապուշային հիվան-  
դութիւն — անհողութիւն:

Կուսակցական կազմակերպութիւնների շատ դե-  
կավարներ մոռացել են, վոր Խորհրդային իշխանու-  
թիւնը հաստատված և առայժմ յերկրագնդի մի վե-  
ցերորդ մասում և մեր յերկիրը գտնվում և կապի-  
տալիստական շրջապատման մեջ: Իսկ կապիտալիստա-  
կան շրջապատումը Փրադ չէ: Բուրժուական յերկիրնե-  
րը միշտ ևլ նույնիսկ իրար մոտ ուղարկել են և ուղար-  
կում են բավական թվով հետախույզներ, լրտեսներ,  
վնասարարներ, վորոնց նպատակն և կազմալուծել:  
Թուլացնել հարևան պետութեան հզորութիւնը: Յեր-  
կրագնդի հինգ վեցերորդ մասում իշխող բուրժուա-  
զիան չի կարող հաշտվել և յերբեք չի հաշտվի բան-  
վորների ու դյուղացիների սոցիալիստական պետու-  
թեան հաջողութիւնների հետ: Իսկ առանձնապես  
զաղազել են Փաշիստական պետութիւնները: Կապի-  
տալիստները մեզ մոտ կրկնապատիկ, յեռապատիկ  
ալելի լրտեսներ են ուղարկում, քան բուրժուական  
յերկիրները միմյանց մոտ: Տրոցկիստները մի դյուև  
են միջազգային Փաշիդմի համար. դա հարմար դե-  
մակ և ամեն տեսակ հակախորհրդային լրտեսական  
ու տեւորիստական խմբեր կազմելու համար:  
Տրոցկիդմն արդեն վաղուց դադարել և բանվոր դա-  
սակարդի մեջ քաղաքական հոսանք լինելուց. տրոց-  
կիստները դարձել են մարդասպանների մի բանդա.



Ֆաշիստական վարձկանների մի բանդա: Այդ բանդա-  
յի շնչին թիվը չպետք է հանդստացնի մեզ. պետք  
է տանապատկել զգաստությունը:

ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը, վո-  
րը մտցնում է ընդհանուր, հավասար և ուղղակի ընտ-  
րական իրավունք՝ գաղտնի քվեարկությամբ, ներ-  
կայացնում է իսկական, սոցիալիստական գեմոկրա-  
տիզմի՝ պատմության մեջ դեռ չտեսնված որինակ:  
Յեւ կուսակցությունը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պե-  
նումի այսօր հրապարակվող բանաձևում, վոր  
ընդունված է ընկեր Ժդանովի գեկուցման առթիվ,  
ընդգծում է, վոր նոր ընտրական սխտեմի պայման-  
ներում «պրոլետարիատի դիկտատուրան դառնում է  
բանվոր դասակարգի կողմից հասարակության պե-  
տական գեկավարման ավելի ճկուն, և հետևաբար  
նաև ավելի հզոր սխտեմ. բանվոր դասակարգի դիկ-  
տատուրայի բաղան ընդարձակվում է, նրա հիմքն  
ավելի հաստատուն է դառնում»:

Սակայն բանվոր դասակարգի գեկտատուրայի  
հիմքի ամբանալը վորչ միայն չի հեշտացնում, այլ  
ընդհակառակը՝ բարդացնում է կուսակցության,  
վորպես սոցիալիստական շինարարության գեկավա-  
րի, խնդիրները: Նոր ընտրությունները նշանակում  
են յերկրի ամբողջ բնակչության քաղաքական ալ-  
տիվության հսկայական վերելք՝ յուրաքանչյուր  
յերկրամասում, յուրաքանչյուր քաղաքում, յուրա-  
քանչյուր շրջանում: Այդ ակտիվությունը պետք է  
գլխավորի բուլչեիկյան կուսակցական կադմակերպու-  
թյունը: Իսկ այդ նշանակում է, վոր առաջին հեր-  
թին պետք է ակտիվացվի մեր կուսակցության ան-  
դամների ամբողջ մասան: Այդ նշանակում է, վոր

յուրաքանչյուր կուսակազմակերպութեան մեջ պետք է  
ամենախիստ կերպով պահպանվեն բոլշևիզմի կազ-  
մակերպական հիմնական սկզբունքներէց մեկը հան-  
դիսացող ներկուսակցական զեմոկրատիայի հիմունք-  
ները:

Այնինչ, ներկուսակցական զեմոկրատիզմի  
սկզբունքը հաճախ խախտվում է զանազան ձևերով:  
Այդ սկզբունքը խախտվում է նրանով, վոր չեն պահ-  
պանվում կուսակցական որդանների ընտրութիւննե-  
րի ժամկետները և ընտրականութիւնը հաճախ վո-  
խարինում են զանազան ղեկավար աշխատողներին  
կուսակցութեան շրջանային, քաղաքային ու մարզա-  
յին կոմիտեների կազմում կոոպտացիայի յենթարկե-  
լու պրակտիկայով, յերբեմն ել պարզապէս փաստու-  
րեն նշանակելով կուսկոմների քարտուղարներին:  
Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը խտով դատապար-  
տեց կուսակցութեան կանոնադրութեան այդ տեսակ  
խախտումները, բոլշևիզմի սկզբունքները խախտում-  
ները և ցույց տվեց այդ խախտումների ամբողջ  
վնասակարութիւնն ու վտանգավորութիւնը:

Կենտկոմի պլենումը մատնանշեց, վոր զեմոկրա-  
տական ցենտրալիզմի հիմքերը խախտման այդպիսի  
փաստերը վնասակար են կուսակցութեան համար ա-  
մենից առաջ այն պատճառով, վոր դրանք «արգելա-  
կում են կուսակցութեան անդամները ակտիվութեան  
աճումը, զրկում են մեր կուսակցութեան կյանքում  
քաղաքական հատուկ նշանակութիւն ունեցող ակտի-  
վին ղեկավար աշխատանքին մասնակցելու հնարալո-  
րութիւննէր, զրկում են կուսակցութեան անդամնե-  
րին կուտորգանների գործունէութեանը վերահսկե-  
լու իրենց որինական իրավունքներէր և դրանով իսկ

խախտում են զեկավարների ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբերութիւնները»։ Իսկ մեր կուսակցութիւնը Լենինի և Ստալինի բերանով միշտ կոչ է արել, վորպէսզի զեկավարները վոչ միայն սովորեցնեն մասսաներին, այլ և սովորեն մասսաներից, կարողանան ողտազործել մասսաների կյանքի հսկայական փորձը և միշտ յենթակա լինեն մասսաների վերահսկողութեանը :

Կուսակցութեան կանոնադրութեան խախտումների հիմնական շտանդը,— խախտումներ, վոր հայտնաբերեց Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը,— հանդիսանում է զեկավար կուսակցական աշխատողների հնարավոր կտրվածութիւնը մասսաներից, կուսաշխատողների մի մասի բյուրոկրատանալը և փաստորեն նրանց անկոնտրոլ լինելը կուսակցական մասսայի առջև։ Յե՛վ Կենտկոմի պլենումն, իր վորոշումներում տալով կուսակցական կազմակերպութիւնների աշխատանքի թերութիւնների խորը վերլուծութիւնը, նշեց այդ թերութիւններն ու խախտումները վերացնելու միջոցները։ Այդ միջոցներից գլխավորն է Կենտկոմի պլենումի հետևյալ վորոշումը.

«Սահմանել կուսորդանների ընտրութիւնների յամանակ թեկնածուների փակ (զաղտնի) քվեարկումը :

Ի՞նչ կուսկազմակերպութիւններում կատարել կուսորդանների ընտրութիւնները, սկսած սկզբնական կուսկազմակերպութիւնների կուսկոմիտեներից և վերջացրած յերկրային, մարդային կոմիտեներով ու ազգային կոմկուսների Կենտկոմներով ընտրութիւններն ավարտելով վոչ ուշ մայիսի 20-ից» :

Դժվար և զերազնահատել Կենտկոմի պլենումի այս վորոշումների հսկայական կարևորութունը կուսակցութեան ամբողջ կյանքի համար: Առաջիկա ամիսները կընթանան կուսակցական կոմիտեաների ընտրութեանների նշանաբանով, բոլշևիկյան ամենալայն ինքնաքննադատութեան նշանաբանով: Կենտկոմը կուսակցութեան բոլոր անդամներին կոչ և անում ուժեղացնելու ինքնաքննադատութեանը, ուժեղացնելու ստեղծագործ ինքնաքննադատութեան, վորն ողնի գուրս գցելու կուսակցութեանից այն ամենը, ինչ վոր խօրթ և բոլշևիզմին:

Թեկնածուների փակ (զաղտնի) քլեարկումն առանձնապես մեծ նշանակութուն կունենա կուսորգանների ընտրութեանների ժամանակ: Դա կուժեղացնի կուսակցական մասսայի առջև յուրաքանչյուր զեկավարի ունեցած պատասխանատւութեան զղացմունքը: Դա բոլոր կուսկազմակերպութեաններում ամենալիակատար հնարավորութուն կստեղծի առանց անձնավորութեանները նկատի առնելու լայն ինքնաքննադատութեան ծալալելու համար: Դա կակտիվացնի ամբողջ կուսակցական մասսային, կուժեղացնի նրա քաղաքական խորաթափանցութեանն ու զգաստութեանը:

Իսկ զգաստութեանն այն հատկութեանն և, վորն այժմ առանձնապես խիստ անհրաժեշտ և բոլշևիկնեբին: Այդ կրկին անգամ ակնհայտ կերպով հաստատում և վոչ միայն տրոցկիստական բանդիտների, այլև աջերի հակակուսակցական յերկերեսանի աշխատանքի փաստը, աջեր, վորոնց պարագլուխները— Բուխարինը և Ռիկովը— Կենտկոմի պլենումի կողմից վտարվեցին կուսակցութեան շարքերից:

Կենտկոմի պլենումի վորոշումները վերջ կտան մի քանի ղեկավարների աններելի, ապուշային անհոգությանը, ղեկավարներ, վորոնց մեջ տարածված եյին այն փտած թեորիաները, թե սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր հաջողությամբ իբր թե հանդարտվում, մեղմանում և սոցիալիզմի դեմ կապիտալիզմի դործակալության մղած պայքարի սրությունը: Պլենումի վորոշումները կողնեն կուսակցական կազմակերպություններին լրջորեն յերեսը դարձնելու, դեսլի կուսակցական-դաստիարակչական աշխատանքը: Կուսակցությունը քիչ աշխատանք չի կատարել, վորպեսզի մեր կադրերը տիրապետեն տեխնիկային: Մենք քիչ ջանք չենք թափել մասսաների տեխնիկական դաստիարակության վրա: Կենտրոնական Կոմիտեն, ընկեր Ստալինը, կտրուկ կերպով հարց են դնում, վոր տեխնիկական դաստիարակության հին լողունը լրացվի նոր լողունըով, բոլշևիզմին տիրապետելու, կադրերին քաղաքական դաստիարակություն տալու լողունըով: Այդ կողմի վերջիններիս տեսնելու թշնամուն, վորքան ել դիմակալորված լինի նա:


Կենտկոմի պլենումի վորոշումները յերկարատե ժամանակաշրջանի ծրագիր են հանդիսանում ամբողջ կուսակցության համար: Այդ ծրագիրը պետք և արագորեն հասցնել յուրաքանչյուր կուսակցական աշխատողի, մեր մեծ կուսակցության յուրաքանչյուր անդամի ղիտակցությանը: Պետք և արագորեն վերակառուցվել, պետք և սկսել աշխատել ու նպրել նոր ձևով:

Ուշադրությամբ ու խորապես ուսումնասիրել Կենտկոմի պլենումի վորոշումները, հասցնել դրանք

յուրաքանչյուր բռնաբարձի— այս և այժմ առաջնա-  
կարգ խնդիրը: Կենսական պլանումն իր վորոշումնե-  
րով հզոր լծակ տվեց կուսակցութեան ձեռքը: Այդ  
լծակի ոգնութեամբ կուսակցական բոլոր կադմակեր-  
պութիւնները կվերակառուցեն իրենց աշխատանքը,  
վորպեսզի ավելի վստահորեն, ավելի ուժեղ թափով,  
ավելի համախմբված առաջ տանեն բանլոր զասա-  
կարգի մասսաներին, ժողովրդական մասսաներին գե-  
պի նոր մարտեր՝ հանուն կոմունիզմի:

**ՉՎՈՏՆԱՀԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ  
ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

**1937 թ. մարտի 7-ի  
„Правда“ № 65 (7031)**





Պետական իշխանության բոլոր որդանների, բոլոր կուսակցական ու հասարակական կաղամակերպությունների դործունեությունն այժմ պետք է ընթացաբար Ստալինյան Սահմանադրության կենսադործման նշանաբանով: Պատմության այդ մեծագույն փաստաթուղթը հսկայական շրջադարձ է նշանակում յերկրի քաղաքական կյանքում:

Յերկրի Գերագույն Խորհրդի առաջիկա ընտրությունների նախապատրաստությունն, անտարակույս, խորհրդային ժողովրդին կհասցնի քաղաքական ակտիվության նոր, ավելի բարձր աստիճանի, առաջ կբերի բնակչության բոլոր շերտերի աննախընթաց շարժում: Այդ շարժումը, յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած այդ շրջադարձը դիտարկելու կոչված է մեր կուսակցությունը, վորն աշխատավորների առաջավոր ջոկատն է հանդիսանում: Նա պետք է ժողովրդի ակտիվությունն ուղղի բանվոր դասակարգի դիկտատուրայի և սոցիալիստական մեծ հայրենիքի հղորդության հետագա ամրապնդման հունով:

Մեր կուսակցությունը բանվոր դասակարգի միակ և իսկական կուսակցությունն է: Յարական մուսուլմանական ընդհատակում, քաղաքացիական պատերազմի

փոթորկահուլոյդ տարիներին, սոցիալիզմի բոլոր թըշնամիների դեմ մղված դաժան պայքարում նա կոփվում էր, ձեռք էր բերում մարտական որադիցիաներ, ամրապնդում և բաղձնասպասկում էր կապերը մասսաների հետ, կատարելագործում էր ղեկավարելու և մասսաների հետ միասին, մասսաների դրուխն անցած՝ հաղթանակելու արվեստը: Բուլլեիկյան կուսակցութունը, վորը մարդկությանը տվել է լենին և Ստալին, վորը բաց է արել նոր սոցիալիստական աշխարհ, — ունի բացառիկ ժողովրդականութուն, հոկայական հեղինակութուն:

Անսահման են խորհրդային ժողովրդի վստահութունն ու սերը իր կուսակցության նկատմամբ, սոցիալիզմի համար մղվող մարտերում ճանաչված, ստուգված ու կոփված ղեկավարի նկատմամբ: Առավել ևս մեծ է կուսակցության պատասխանատվութունը, առավել ևս բարդ են նրա խնդիրները, առավել ևս բարձր են յուրաքանչյուր կոմունիստին առաջադրվող պահանջները: Յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած շրջադարձը կուսակցութունը պարտավոր է դիմավորել ըստ ամենայնի զինված և լիովին ասպահովել իր ղեկավար դերը նոր ընտրութուններում: Թե ինչպես պետք է անել այդ, թե ինչ է պահանջվում դրա համար, բացառիկ պարզությամբ ասված է Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումի յերեկ հրատարակված բանաձևում.

«Դրա համար պահանջվում է, վոր կուսակցութունն ինքն անցկացնի հետևողական դեմոկրատական պրակտիկա, վոր նա ներկուսակցական կյանքում մինչև վերջն անցկացնի դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները, ինչպես թյո պահանջում է կու-

սակցութեան կանոնադրութիւնը, վոր նա ինքն ունենա այն անհրաժեշտ պայմանները, վորոնց շնորհիվ կուսակցութեան բոլոր որդաններն ընտրովի լինեն, վոր քննադատութիւնը և ինքնաքննադատութիւնը զարդանան լիակատար չափով, վոր կուսակցական մասսայի առջև կուսակցական որդանների պատասխանատուութիւնը լիակատար լինի և վոր ինքը՝ կուսակցական մասսան լիովին ակտիվացիւ»:

Կենտկոմի պլենումն արձանագրեց, վոր շատ կուսակցական կազմակերպութիւններում կուսիս կերպով խախտուած և կուսակցութեան կանոնադրութիւնը, դեմոկրատական ցենտրալիզմը հաճախ փոխարինվում և բյուրոկրատական ցենտրալիզմով: Լայնորեն տարածված և զանազան ղեկավար աշխատողների կոոպտացիայի ամենամիաստակար պրակտիկան, քարտուղարների նշանակումը, կոմունիստներէ իրավունքների վտանահարումը, ինքնաքննադատութեան ճնշումը: կուսակցական կազմակերպութիւնների վորոշ ղեկավարներ կազրերի ընտրութեան ու առաջընթացի բոլջեիկյան սկզբունքները փոխարինել են քաղքենիական, ընտանեկան սկզբունքներով: Արդեն պրակտիկայի մեջ և մտել այն, վոր յեթե պատասխանատու կուսակցական աշխատողը գնում և նոր մարդ, տալա նա անպայման իր հետեւից քաշ և տալիս իր՝ իր բն ստուգված աշխատողների «պոչը»:

Այսպես, որինակ, Յարոսլավի մարզկոմի քարտուղար ընկեր Վայնովը դեռ նոր էր յեկել նոր մարդ, յերբ սկսեց յերկրի բոլոր ծայրերից իր մոտ աշխատանքի քաշել իր ծանոթներին, բարեկամներին: Մարզկոմի շատ բաժինների վարիչների, Յարոսլավի քաղկոմի քարտուղարի, ռայկոմների քարտուղարներ-

բի և նույնիսկ քաղաքի վարիչի պաշտոնում նա նըստեցրել եր իր մարդկանց, վորոնց կաղմակերպությունը բոլորովին չի ճանաչում, վորոնք առաջ են քաշված բացառապես ծանոթության կարգով, հին կապերի շնորհիվ:

Այսպիսի անպետք պրակտիկայի վտանդն այն է, վոր այդ պրակտիկան կաղմակերպությունների մեջ առաջ է բերում ստորաքարչություն, աստիճանահարգություն, կասեցնում է տեղական կադրերի աճումը, խղում է ստեղծում ղեկավարության ու մասսաների միջև և նպաստում է կուսակցության կանոնադրության հիմնական սկզբունքների խախտմանը: Այս բոլորը հաստատվում է թեկուզ նույն այդ Յարոսլավյի կաղմակերպության մեջ ստեղծված դրությամբ, վորտեղ նույնիսկ մարդային կուսակցական կոնֆերենցիան անց է կացել ստորաքարչության վոգով, վորտեղ ուժեղ կերպով դարդացած է կոոպտացիան, հարցման կարգով հարցերը լուծելը և այլն:

Կուսակցականության հիմնական պահանջները մոռացության տալը, ներկուսակցական ղեմոկրատիայի խախտումը անխուսափելիորեն հասցնում են կուսակցական որդանների՝ մասսաներից կտրվելուն, առաջ են բերում մի իրադրություն, յերբ կուսակցական ղեկավարն իրեն չըջապատում է այնպիսի մարդկանցով, վորոնք ստորաքարչական յեռանդով տարված ստեղծում են չողոքորթության խեղդիչ մթնոլորտ, բթացնում են բուլչեիկյան զղաստությունը: Իսկ դրանից ուզվում են թշնամիները՝ Փաշլովի քործակալները — ստորներից ստոր տրոցիկիստներն

ու աջ թափթփուկները: Յեւ պատահական չէ, վոր  
հենց այն կազմակերպություններում, վորտեղ  
առանձնապես կոպիտ կերպով վտանհարվել  
են ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքնե-  
րը, վորտեղ խեղդվել է ինքնաքննադատությունը,  
այդտեղ հեշտությամբ կարողացել են խրամատա-  
վորվել սոոր արոցկիստներն ու աջ թափթփուկները:

Այդպիսի անպետք պրակտիկայի ցայտուն որի-  
նակներ են հանդիսանում վերջին ժամանակներս Համ-  
Կ (բ) Կ Կենտկոմի կողմից հայտնաբերված Ադով-  
Սեծովյան, Կիևվի կազմակերպություններում ու  
Մեկրաինայի Կ (բ) Կ Կենտկոմում կուսակցական աշ-  
խատանքն աղաղակող կերպով անուշադրության  
մատնելու, ներկուսակցական դեմոկրատիան խախ-  
տելու փաստերը: Այս որինակները, ղժբախտաբար,  
յեղակի չեն. դրանք այս կամ այն չափով հատուկ են  
բոլոր կուսակցական կազմակերպություններին: Համ-  
Կ (բ) Կ Կենտկոմի պլենումը խիստ կերպով դատա-  
պարտեց կուսակցական աշխատանքի խեղաթյուրում-  
ներն ու թերությունները և բոլոր կուսակցական  
կազմակերպություններից պահանջեց վերականգնել  
կուսակցության կանոնադրությունն ու դեմոկրատա-  
կան ցենտրալիզմի սկզբունքները:

Այս է ներկայումս գլխավորը, վորովհետև յու-  
րաքանչյուրի համար պետք է հատկանալի լինի, վոր  
«...դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների  
խախտումները վնաս են հասցնում կուսակցությանը,  
վորովհետև դրանք արդելակում են կուսակցության  
անդամների ակտիվության աճումը, մեր կուսակ-  
ցության կյանքում քաղաքական հատուկ նշանակու-  
թյուն ունեցող ակտիվին գրկում են դեկավար աշխա-

տանքին մասնակցելու հնարավորությունից, կուսակցութեան անդամներին գրկում են կուսորգանները դործունեյութեանը վերահսկելու իրենց որինական իրավունքներից և դրանով իսկ խախտում են ղեկավարների ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբերությունները»:

Մենք պետք է հասնենք այն բանին, վորպեսզի բոլոր կոմունիստները, բոլորն առանց բացառութեան, ակտիվ կերպով մասնակցեն կուսակցական կյանքին, վորպեսզի բոլոր կուսակցական կազմակերպութեաններն ակտիվ կերպով աշխատեն: Այդ եր սովորեցնում մեզ Լենինը, այդ է սովորեցնում ընկեր Ստալինը: Մենք պետք է հասնենք այն բանին, վոր «կուսակցական մասսան վճռի ինչպես կուսակցական, այնպես և ընդհանուր դործնական հարցերը, կուսակցական մասսան ընդունի իր բանաձևերը և պարտավորեցնի իր կազմակերպութեաններին կենսադործել այդ բանաձևերը... Մեզ մոտ խոսքը վերաբերում է գործողութեան ղեմոկրատիզմին, յերբ կուսակցական մասսան ինքն է վճռում հարցերը և ինքն էլ գործում է» (Ստալին):

Ինքնաքննադատութեանը բոլջևիղմի անկապտելի, մշտապես գործող ղենքն է: Կուսակցական որդանների մեջ ընտրվելու համար առաջադրված թեկնածութեանների դադտնի քվեարկութեանը, վոր սահմանեց կենտկոմի պլենումը, միայն այն ղեպըում կտա անհրաժեշտ արդյունքներ, յեթե կուսակցական կազմակերպութեանների մեջ բարձրանա բոլջևիկյան ինքնաքննադատութեան նոր ալիք, ինքնաքննադատութեան՝ անձնավորութեաններից անկախ: Այն կուսակցական աշխատողը, վորը չգիտե ողտվել ինքնա-

քննադատութիւնից, իսկ առաւել ևս նա, ով ճնշում է ինքնաքննադատութիւնը — բողբեիկ չե, այլ բյուրոկրատ, վորին պետք է դուրս վնդեի կուսակցական ապարտից: Ինքնաքննադատութեան ըստ ամենայնի ծավալումը կբարձրացնի մեր կադրերի դադափարային մակարդակը, կուսակցական մասնային թույլ կտա իր միջավայրից ղեկավար աշխատանքէ առաջ քաշել այնպիսի մարդկանց, վորոնք իսկպես ստուգված են բանվոր դասակարգի բոլոր թշնամիներին դեմ մղվող պայքարում, կայուն են, մինչև վերջը նվիրված Լենինի—Ստալինի կուսակցութեանը և նրա Կենտրոնական Կոմիտեյին:

Ըստվորում չպետք է մոռանալ, վոր խոսքը վերաբերում է պրոլետարական, բոլշևիկյան ինքնաքննադատութեանը, այնպիսի ինքնաքննադատութեանը, վորը բացահայտում է և ուղղում մեր թերութիւնները, վորի նպատակն է բարձրացնել մեր ամբողջ աշխատանքը: Այդ ինքնաքննադատութիւնը վոչ մի ընդհանուր բան չունի մեզ թշնամի բանակից յեկող «քննադատութեան» հետ, վորն ուղղված է մեր կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան դեմ: Բանվոր դասակարգի թշնամիներին դեմ մղվող պայքարում մենք չոր կպահենք վառողը:

Ընկեր ժղանովի ղեկուցման առթիվ Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի ընդունած վորոշումները մեծ ու պատասխանատու ծրագիր են բոլոր կուսակցական կազմակերպութիւնների համար: Հարկավոր է անհատալ ձեռնամուխ լինել նրա կատարմանը: Դահուժիկ թափով կբարձրացնի կուսակցական մասնաների քաղաքական ակտիվութիւնը, կոժանդակի բողբեիկյան կադրերի աճմանը:

Աշխատավորների մարտական ավանգարդը —  
Ղենի՛նի—Ստալինի կուսակցութիւնը—պետք է ըստ  
ամենայնի զինված ղեմավորի յերկրի քաղաքական  
կյանքում տեղի ունեցող պատմական շրջադարձը և  
ապահովի մեր հայրենիքի, մեր ժողովրդի ե՛լ ավելի  
հուժկու աճումը:



**ԲՈՒԶԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ  
ԵՅՈՒԹՅՈՒՆԸ**

**1937 թ. մարտի 9-ի  
„Правда“ № 67 (7033)**



Մեր յերկրի քաղաքական կյանքում կտրուկ շքր-  
ջադարձ է կատարվում: Նոր Սահմանադրութիւնը  
տանում է դեպի աշխատավորների քաղաքական ակ-  
տիվութեան հետագա ուժեղացումը, դեպի խորհրդա-  
յին դեմոկրատիայի ե՛լ ավելի մեծ ծաղկումը.  
բնակչութեան նորանոր խավեր հաղորդակից են լի-  
նում պետութեան կառավարմանը: Այլելի քան յերբեք  
ածել է մեր կուսակցութեան դերը, մի կուսակցու-  
թիւն, մորը կոչված է դիտաւորելու այդ շրջադարձը  
և ապահովելու իր ղեկավարութիւնը յերկրի գերա-  
դույն որդանների առաջիկա ընտրութիւններում:  
Մասաների մեջ կուսակցութեան կողմից կա-  
տարվող կուսակցական - քաղաքական աշխա-  
տանքն այժմ նոր, միանգամայն բացառիկ նշա-  
նակութիւն է ստանում: Հասել է ժամանակը հան-  
դես բերելու բոլշևիկյան պրոպագանդայի, ագիտա-  
ցիայի, կադմակերպչական գործունեութեան իսկա-  
կան արվեստ:

Պեաք է լիակատար ուղղամտութեամբ ասել,  
վոր վոչ բոլոր կուսակցական կադմակերպութիւն-  
ները պարզորոշ կերպով են ըմբռնում իրենց խնդի-  
րները: Որինանների համար հեռու գնալու կարիք  
չկա: Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի պլե-

նումը նշեց կուսակցական-քաղաքական աշխատանքն անուշադիր թողնելու աղաղակող փաստեր՝ Ադով-Սեծովյան յերկրկոմում, Կիևի մարդկոմում, Ուկրաինայի Կ (բ) Կ-ի Կենտկոմում և այլ կուսակցական կազմակերպություններում: Միակողմանի կերպով տնտեսությամբ տարվելը և կուսակցական-քաղաքական հարցերն անուշադրության մատնելը թուլացրեց մեր կազմակերպություններին կապերը մասսաների հետ: Մարդիկ սկսեցին իրենց որորել հաջողություններով: Այդ ծնունդ եր տալիս բացրեանության, պարծենկոտության և ապուշային հիվանդության — անհողության:

Հարկաւոր և, վորպեսզի բոլոր կոմունիստներն ել առանց բացառության հասկանան մեր ապրած մոմենտի յուրատեսակությունը, հասկանան մեր կուսակցական կազմակերպությունների թույլ տված սխալների եյությունը և վերակառուցվեն նոր ձևով: Մենք, կոմունիստներս, զործողության, հեղափոթական պայքարի մարդիկ ենք, մենք դասեր ենք քաղում, վոր սխալները չկրկնենք:

Գաղտնիք չե, վոր շատ կուսակցական կոմիտեների քարտուղարներ ավելի շատ սկսել են նմանվել ինժեներների, ադրոնոմների, հաշվապահների և մուսացել են, վոր իրենք գլխավորում են կուսակցական կազմակերպություններ, վորոնց խնդիրն և ուղղություն տալ խորհրդային ու տնտեսական կազմակերպություններին և ղեկավարել դրանք: Մոտացել են, վոր իրենք պետք և լինեն մասսաների քաղաքական այնպիսի ղեկավարներ, վորոնք ղիտեն ժամանակին ճանաչել և յերևան բերել թշնամուն:

Կարիք կա՞ արդյոք ապացուցելու, վոր տնտես-

սական աշխատանքով տարվելը և կուսակցական-քաղաքական հարցերը մոռացութեան տալը կործանարար և մեղ համար: Հենց վոր կուսակցական կազմակերպութիւնը վերածվում և արտադրական-տեխնիկական կազմակերպութեան, նա կորցնում և քաղաքական ճիշտ կողմնորոշումը, կոմունիստները մոռանում են կրպակաւորութեան շրջապատումը, թշնամիներին, դառնում են իրենց քթից հետու վոչինչ չտեսնող գործամոլներ: Այդպիսի կոմունիստների պատկերացման մեջ գոյութիւն ունեն գլխավորապես միայն մեքենաներ, տարա, պահեստի մասեր, պայմանագրեր, հաշվարկումներ, և նրանք աչքաթող են անում ամենադրամաւորը—մարդկանց, աշխատավորներին, վորոնց քաղաքական կազմակերպիչներն ու ղեկավարները պարտավոր են լինել իրենք:

Մեղ այդպիսի ծայրահեղութիւններ պետք չեն: Դրանք հակասում են լենինի—Ստալինի ուսմունքին: Չի կարելի կուսակցական աշխատանքը հակադրել տնտեսականին և վոտով-գլխով թաղվել դրանցից միայն մեկի մեջ. չի կարելի մոռանալ վո՛չ մեկը, վո՛չ ել մյուսը:

Այնինչ, արդեն նշաններ կան, վոր միքանի կուսակազմակերպութիւններ կարող են մյուս կողմը նետվել և յերեսի վրա թողնել տնտեսական հարցերը: Արդեն խոսակցութիւններ կան, թե «այժմ ավելի հեշտ կլինի», «վերացված են շատ պարտականութիւններ», «այժմ ցանքով չենք զբաղվում» և այլն:

Այսպիսի տրամադրութիւնները կուսակցութեան համար նույնքան կործանարար են, վորքան և կուսակցական-քաղաքական աշխատանքի անտեսումը, միմիայն տնտեսական գործերով տարվելը: Այդ

պետք է հասկանալ մինչև վերջը, վորովհետև յեթե այդպիսի արամադրություններ քիչ թե շատ լայն տարածում ստանան, մանավանդ այժմ, յերբ յերկրը զտնվում է գարնանացանի նախորդակին, ապա մեր տնտեսական շինարարությունն զգալի կորուստ կունենա:

Իսկ վո՞րտեղից են առաջ յեկել այդպիսի տրամադրություններ: Դրանք արդյունք են այն բանի, վոր դեռ շատ կոմունիստներ, այդ թիվում նաև դեկավարներ, սխալ են պատկերացնում կուսակցութեան դերը բանվոր դասակարգի դիկտատուրայի սխտեմում, մանավանդ ներկա ժամանակաշրջանում, յերբ խորհրդային դեմոկրատիան պետք է իրականացվի է՛լ ավելի լայն չափով. չգիտեն այդ առթիվ Լենինի ու Ստալինի տված ցուցումները:

Տնտեսութեան համար մենք պատասխանատու չենք, վորպէս բանվոր դասակարգի դիկտատուրայի հողին հանդիսացող կուսակցութեան: Մենք, կոմունիստներս, իրավունք չունենք տնտեսութեանց հեռանալու և լիակատար պատասխանատվութեան ենք կրում սոցիալիստական շինարարութեան համար:

Բայց կուսակցական կազմակերպութեանները չպետք է փոխարինեն և ղիմադուրի անեն խորհրդային ու տնտեսական այն որդաններին, վորոնք անմիջականորեն զբաղվում են տնտեսական շինարարութեամբ, Ֆինանսներով, պլանավորմամբ և այլն: Կուսակցական կոմիտեները չպետք է վերածեն տնտեսական ու խորհրդային շինարարութեան շտաբների: Կուսակցութեանը հիմնական ղեկավար ուժն է բանվոր դասակարգի դիկտատուրայի սխտեմում, — սովորեցնում է ընկեր Ստալինը: «Նրա ղերն այն է,

վորպեսզի միավորի առանց բացառութեան պրոլե-  
տարիատի բոլոր մասսայական կազմակերպութեանն-  
երի աշխատանքը և նրանց գործողութեաններն ուղ-  
ղի մի նպատակի, պրոլետարիատի ազատագրման  
նպատակին» (Ստալին) :

Այդ նշանակում է, վոր կուսակցութեանն ըստ  
ամենայնի ամբացնում է խորհրդային, անտեսական,  
պրոֆմիլութենական կազմակերպութեանները, նրանց  
միջոցով անց է կացնում իր վորոշումները, բարձ-  
րացնում է նրանց հեղինակութեանը, ուղղութեան է  
տալիս նրանց ամբողջ աշխատանքին: «Պրոլետարիա-  
տի զիկտատուրան,—ասում է ընկեր Ստալինը,—  
բողկացած է կուսակցութեան ղեկավար ցուցումնե-  
րից, պլյուս այդ ցուցումները կիրառումը պրոլետա-  
րիատի մասսայական կազմակերպութեանները կող-  
մից, պլյուս դրանց կենսագործումը՝ բնակչութեան  
կողմից»:

Հարց է ծագում. ուրեմն ի՞նչ հիման վրա կուսակ-  
ցական կազմակերպութեանները փոխարինում են  
խորհուրդներին, հոգային որդաններին, փաստորեն  
նրանց հեռացնում են անտեսութեանը ղեկսփայրելուց,  
ձեռնամուխ են լինում առանց բացառութեան բոլոր  
գործերին: Ընկեր Ստալինը, խոսելով կուսակցութեան  
ղեկավար զերի մասին, մատնանշել է. «Այդ, իհար-  
կե, չի նշանակում, վոր կուսակցութեանը կարող է  
փոխարինել կամ պետք է փոխարինի պրոֆմիլու-  
թեաններին, խորհուրդներին և մյուս մասսայական  
կազմակերպութեաններին: Կուսակցութեանն իրա-  
կանացնում է պրոլետարիատի զիկտատուրան: Բայց  
այդ նա իրականացնում է վոչ թե անմիջականորեն,  
այլ պրոֆմիլութեանները ոգնութեամբ, խորհուրդնե-

քի և նրանց ճյուղավորումների միջոցով: Առանց այդ «չարժափոկերի» անհնարին կլինե՞ր քիչ թե շատ հաստատուն ղեկատուութեամբ:

Այսպես, ուրեմն, լենինիզմը սովորեցնում է պայքար մղել վնասակար ծայրահեղությունների դեմ: Նույն չափով կործանարար է կուսակցութեան համար կուսակցական-քաղաքական հարցերը մոռացութեան տալը և տնտեսութեան ղեկավարումից հետ քաշվելը: Հարկավոր է հմտորեն զուգորդել կուսակցական-քաղաքական աշխատանքը և տնտեսութեան ղեկավարումը, ինչպես հարկն է հենվելով խորհրդային ու տնտեսական կազմակերպությունների վրա:

Իսկ ի՞նչ պետք է անել, վերսկզբի այդ կազմակերպությունները միանգամայն մարտունակ կլինեն և հաջողութեամբ իրականացնեն կուսակցութեան ու կառավարութեան ցուցումները:

Նախ և առաջ՝ ամրացնել այդ կազմակերպությունները կադրերով, ընտրել այնպիսի մարդիկ, վերոնք ընդունակ են տնտեսութեանը ղեկավարել անձնավերաբար ու նախընտրել, վերոնք գործին խորապես հմուտ են:

Այդ պրոբլեմը, կադրերի ընտրութեան պրոբլեմը, առանձնապես սուր կերպով դրված է դյուղատնտեսութեան ղեկավարման բնագավառում: Արդյունաբերութեան մեջ գործը մի քիչ ավելի լավ է: Այդտեղ կադրերը հիմնականում արդեն ստեղծվել են, մեծ դպրոց են անցել ստալինյան հնգամյակների իրականացման համար մղվող պայքարում: Իսկ դյուղատնտեսական կազմակերպություններում կադրերն ավելի թույլ են ու ավելի քիչ պատրաստված, և կուսակցական կազմակերպություններին վիճակված է,



և դեռ պետք է վիճակված լինի, դրադվել սնտեսա-  
կան շինարարութեան նույնիսկ մանրունքով, մինչև  
վոր հողային որդաններն ինչպես հարկն եւ ամրանան :

Այժմ յուրաքանչյուր կուսակցական կազմակեր-  
պութեան առջև ամբողջ հասակով ծառայած եւ դյու-  
ղատնտեսութեան ղեկավարման համար կադրեր ընտ-  
րելու հարցը : Դա մեծ, բարդ աշխատանք է, վոր ա-  
մենախելամիտ վերաբերմունք եւ պահանջում : Կադրե-  
րը պետք է ընտրել՝ առաջնորդվելով յուրաքանչյուր  
աշխատողի իրական արժեքով և վոչ թե «մեր մարդն  
է» կեղծ սկզբունքով : Անձնական ծանոթութիւնը,  
մի անձնավորութեան նկատմամբ ունեցած նվիրվա-  
ծութիւնը քաղքենիական նշաններ են, և դրանցով  
չի կարելի առաջնորդվել մարդկանց ընտրելիս : Կադ-  
րերը պետք է ընտրել լենինյան—ստալինյան սկզբուն-  
քի հիման վրա—քաղաքականապես ստուգելով մարդ-  
կանց, նրանց նվիրվածութիւնը կուսակցութեանը,  
նրա կենտկոմին, ստուգելով նրանց գործնական պի-  
տանիութիւնը :

Վրա յե հասնում կուսակցական կազմակերպու-  
թիւնների աշխատանքի արմատական վերակառուց-  
ման շրջանը : Դրա հաջողութիւնը կախված է այն  
բանից, թե ինչպես կհասկանա կուսակցական ակ-  
տիվն իր խնդիրները, ինչպես կտանի իր հետեւից  
կոմունիստներին : Կենտրոնական Կոմիտեյի պլենումի  
վորոշումները պետք է հասցնել յուրաքանչյուր կո-  
մունիստի. այդ վորոշումները պետք է լայնորեն  
հայտնի լինեն բոլոր աշխատավորներին : Դեռ աշխա-  
տանք շատ կա : Ուստի վնասակար ու հիմար բան կը-  
լինի գործն այնպես պատկերացնել, ինչպես անում  
են մի բանի կենտրոնական թերթեր, — թե կուսակցու-

թյանը և ամբողջ ժողովուրդն արդեն ուսումնասի-  
րել ու յունբացրել են Կենտկոմի պլենումի վորոշում-  
ները: Այդ վորոշումները դեռ ինչպես հարկն և  
հայտնի չեն մասսաներին, իսկ շաղակրատ լրագրող-  
ներն արդեն ավետում են համատարած վողջույների  
ու հալանությունների մասին: Իրականության այդ-  
պիսի կեղծ պատկերումը ղինաթափ և անում կուսակ-  
ցական կազմակերպություններին և բացի վնասից  
վոչինչ չի կարող տալ:

Առանց մի կողմից մյուսը նետվելու, լավ հիշե-  
լով և իրականացնելով Ղենինի ու Ստալինի ցուցում-  
ները, մասսաների գլուխն անցած, համաչափ քայլով  
առաջ կգնա մեր կուսակցությունը դեպի կոմունիս-  
տական հասարակության բարձունքները:

## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինֆորմացիոն հաղորդագրուք-յուն Համ.Կ(բ)Կ  
Կենտկոմի հերքական պլենումի մասին . . . . . 5

Կուսակցական կազմակերպութեան ճանապարհատուները / ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի՝  
նոր ընտրական սխառեմով կատարելիք ընտրու-  
ք-յուններին և կուսակցական-ֆաղափական աշխա-  
տանքի համապատասխան վերակառուցումը (Համ.  
Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի բանաձևն ընկ. Ժ.Գ.Ա-  
ՆՈՎԻ զեկուցման առթիվ՝ ընդունված 1937 թ.  
փետրվարի 27-ին) . . . . . 7

Ինֆեռֆեռագրատուքյան և մասսաների հետ  
Կապված լինելու նշանաբանով (1937 թ. մարտի  
6-ի «Правда» № 64 (7030)) . . . . . 19

Զվարճահարել Կուսակցության անդամի իրա-  
վունքները (1937 թ. մարտի 7-ի «Правда» № 65  
(7031)) . . . . . 29

Բուլշևիկյան դեկավարման էյուքյունը (1937  
թ. մարտի 9-ի «Правда» № 67 (7033)) . . . . . 39

44

Թարգմ. խմբագիրներ Գ. Սահակյան, [redacted]  
Թարգմ. և կոնտրոլ սրբագրիչ Յե. Տեր-Մինասյան  
Տեխնիկական խմբագիր Մ. Եփրիկ  
Սրբագրիչ Լ. Աբովյան  
Գլավլիտի լիազոր Ի— 4873.  
Պատվեր № 440. Տիրած 10.000  
Հանձնված է արտադրության 17/III 1937  
Ստորագրված է տպագրելու 18/III 1937  
Գինը 40 կ.

Պետհրատի տպարան





Մթն 1940 թ.

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0019228

110-

150

A  $\frac{1}{2}$   
7950

9670 40 LAM. -044.



1000